

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Խոսրով Հարությունյանի, Հովհաննես Սահակյանի, Մնացական Մնացականյանի, Արմեն Մխիթարյանի և Հակոբ Հակոբյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-342-30.09.2013-ՏՀ-010/0 և Պ-342՝-30.09.2013-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

1. սահմանել, որ հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքներն ընդունվելու տարվան հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո վերցերորդ ամսվա սկզբից: Ընդ որում, առաջարկվում է սահմանել նաև, որ եթե հաջորդ տարվա պետական բյուջեի մասին օրենքը չի ընդունվել մինչև ընթացիկ տարվա ավարտը, ապա

հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կարող են ուժի մեջ մտնել միայն պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելու պահից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո վերցրերող ամսվա սկզբից,

2. սահմանել, որ հարկի դրույքաչափի իջեցում, հարկ վճարողների գործելու պայմանների մեղմացում, հարկի վերացում նախատեսող օրենքներն ուժի մեջ են մտնում այդ օրենքների ընդունման տարվան հանջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակումից 30 օր հետո՝ անկախ հաջորդ տարվա պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետներից,

3. ուժը կորցրած ճանաչել «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն, եթե պետական բյուջեի նախագծով նախատեսվում է բյուջեի կատարումն ապահովող օրենքների ընդունում, ապա բյուջեի մասին օրենքի նախագիծը քվեարկության է դրվում դրանց ընդունումից հետո:

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Ներկայացված օրենքի նախագծի նպատակադրումն ընդունելի է: Միաժամանակ, ներկայացնում ենք նախագծի վերաբերյալ որոշ նկատառումներ՝

1) նախագծով առաջարկվող՝ 6-ամսյա ժամանակահատվածը բավականաչափ երկար է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հունիսի երկրորդ հինգշաբթի օրվանից մինչև սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրը հերթական նստաշրջան չի գումարում՝ հարկի դրույքաչափի բարձրացում կամ նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները գործնականում պետք է ընդունվեն ամենաուշը մայիս-հունիս ամիսներին: Սա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկային քաղաքականության տեսանկյունից առավել օպերատիվ և ճկուն որոշումներ ընդունելու և օրենսդրական նախաձեռնություններ իրականացնելու հնարավորություն չի ունենա: Այդ կապակցությամբ, առաջարկում

ենք նախագծով ներկայացված 6-ամսյա ժամանակահատվածը փոխարինել 3-ամսյա ժամանակահատվածով,

2) հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ հաճախ ընդունված օրենքների կիրառությունը պահանջում է համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունում, որոնց ընդունումն իրավական առումով հնարավոր չէ քանի դեռ հիմնական օրենքը սահմանված կարգով ուժի մեջ չի մտել, առաջարկում ենք՝ վերոնշյալ նախագիծը վերախմբագրել այնպես, որ հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքներն ուժի մեջ մտնեն ներկայումս գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն կիրառվեն այդ օրենքներն ընդունվելու տարվան հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող երրորդ ամսվա սկզբից ծագած հարաբերությունների նկատմամբ, իսկ հաջորդող տարվա պետական բյուջեի մասին օրենքը մինչև ընթացիկ տարվա ավարտը չընդունվելու դեպքում՝ պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

Նույն նկատառումներով պայմանավորված՝ առաջարկում ենք սահմանել նաև, որ հարկի դրույքաչափի իջեցում, հարկ վճարողների գործելու պայմանների մեղմացում կամ հարկի վերացում նախատեսող օրենքներն ուժի մեջ են մտնում ներկայումս գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն կիրառվում են այդ օրենքներն ընդունվելու տարվան հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող 30-րդ օրվանից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ,

3) առաջարկում ենք նախագծով սահմանել, որ դրանով առաջարկվող դրույթները չեն վերաբերում տեղական հարկերին:

«Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Ներկայացված օրենքի նախագծի ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի ընդունման դեպքում առաջիկա տարվա պետական բյուջեի

կատարման համար անհրաժեշտ իրավական դաշտի ամբողջականությունը (որում կարող են ներառված լինել նաև հարկային քաղաքականությունը չառնչվող այլ հարաբերություններ) մինչև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքի ընդունումը հնարավոր է, որ չսպահովվի, ինչը կմեծացնի պետական բյուջեի կատարման ապահովման ռիսկայնության մակարդակը:

Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ նաև, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի և վերջինիս կատարումն ապահովող օրենքների նախագծերի քվեարկության առաջնահերթությունները կարգավորող՝ «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածը չի հակասում վերոնշյալ նախագծերի փաթեթում ներառված՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հիմքում դրված՝ հարկային օրենսդրության առանձին փոփոխություններն ուժի մեջ մտնելու ժամկետներին վերաբերող ընդհանուր գաղափարախոսությամբ:

Միաժամանակ, հայտնում ենք, որ ներկայացված նախագծերի փաթեթում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագծերի փաթեթում ներառված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի, իսկ «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը փաթեթից անհրաժեշտ է հանել:

Միաժամանակ, հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱԿԱԿՈՒՈՒԴՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի AJV-44-50_2013-10-23_01d10.1d16034-13_2013-10-29

Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Եզրակացություն

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **դրական ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **դրական ազդեցություն:**

ԵՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման

նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **դրական ազդեցություն:**

Նախագիծը վերաբերում է հարկերի գործող դրույքաչափերում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև նոր հարկատեսակ նախատեսող օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետներին, մասնավորապես՝ սահմանվում է, որ հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կարող են ուժի մեջ մտնել պաշտոնական հրապարակումից հետո վեցերեք ամսվա սկզբից, ինչը կնպաստի ավելի թափանցիկ հարկային վարչարարությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) կանոնակարգվում է հարկերի գործող դրույքաչափերում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև նոր հարկատեսակի ներդրում նախատեսվող օրենքների ուժի մեջ մտնելը:

Նախագծերի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում ապրանքային շուկաների հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

1) սահմանել, որ հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքներն ընդունվելու տարվա հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո վեցերորդ ամսվա սկզբից: Ընդ որում, առաջարկվում է սահմանել նաև, որ եթե հաջորդ տարվա պետական բյուջեի մասին օրենքը չի ընդունվել մինչև ընթացիկ տարվա ավարտը, ապա հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կարող են ուժի մեջ մտնել միայն պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելու պահից, բայց ոչ շուտ քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո վեցերորդ ամսվա սկզբից,

2) սահմանել, որ հարկի դրույքաչափի իջեցում, հարկ վճարողների գործելու պայմանների մեղմացում, հարկի վերացում նախատեսող օրենքներն ուժի մեջ են մտնում այդ օրենքների ընդունման տարվան հանջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ քան դրանց պաշտոնական

հրապարակումից 30 օր հետո՝ անկախ հաջորդ տարվա պետական բյուջեի մասին օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետներից,

3) ուժը կորցրած ճանաչել «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն, եթե պետական բյուջեի նախագծով նախատեսվում է բյուջեի կատարումն ապահովող օրենքների ընդունում, ապա բյուջեի մասին օրենքի նախագիծը քվեարկության է դրվում դրանց ընդունումից հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծերի փաթեթի ընդունման ազդեցությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների վրա կլինի չեզոք:

Պ-342-30.09.2013-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 8. Հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքները ընդունելու տարվան հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո վեցերորդ ամսվա սկզբից:

Այն դեպքում, երբ հաջորդ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքը չի ընդունվել մինչև ընթացիկ տարվա ավարտը, ապա հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կարող են ուժի մեջ մտնել ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ուժի մեջ մտնելու պահից, բայց ոչ շուտ քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո վեցերորդ ամսվա սկզբից:

Հարկի դրույքաչափի իջեցում, հարկատուների գործելու պայմանների մեղմացում, հարկի վերացում նախատեսող օրենքներն ուժի մեջ են մտնում այդ օրենքների ընդունման տարվան հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ քան դրանց պաշտոնական հրապարակումից 30 օր հետո՝ անկախ հաջորդ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ուժի մեջ մտնելուց:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո տասներորդ օրը:

Պ-342՝-30.09.2013-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Բյուջատային համակարգի մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ հարկերի դրույքաչափերն ու տեսակները սահմանվում են « Հարկերի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես նշված օրենքով է սահմանվում հարկերի դրույքաչափերի փոփոխությունների իրականացման կարգը: Համաձայն այսօր գործող կարգի, եթե սահմանված հարկի որեւէ դրույքաչափ փոխվում է եւ եթե ֆինանսական տարին ներառում է փոփոխման փաստացի ժամկետը (եթե այդ ժամկետը ֆինանսական տարվա առաջին օրը չէ), ապա հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով նախկին դրույքաչափը մինչեւ փոփոխման փաստացի ժամկետը, իսկ նոր դրույքաչափը՝ փոփոխման փաստացի ժամկետից մինչեւ տարվա ավարտը: Եվ եթե որեւէ հարկ վերացվում է, ապա այդ հարկի վերացման տարվա համար հարկի վերացումը դիտարկվում է որպես հարկի դրույքաչափի փոփոխում, իսկ նոր դրույքաչափը՝ 0:

Օրենքը սահմանում է նաեւ, որ հարկատուների գործելու պայմանները խստացնող դրույթներ պարունակող օրենքները կարող են ուժի մեջ մտնել դրանց պաշտոնական հրապարակումից 30 օր հետո:

Միաժամանակ «Բյուջատային համակարգի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է, որ եթե ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվում են բյուջեի կատարումն ապահովող օրենքների ընդունում, ապա այդ օրենքներն ընդունվում են մինչ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքը քվեարկության դնելը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքը նոր հարկտեսակի մասին օրենքի ուժի մեջ մտնելու համար սահմանում է նույն կարգը:

Դժվար չէ նկատել, որ նշված կարգերը հնարավորություն են տալիս հարկերի դրույքաչափերում փոփոխությունը, հատկապես դրույքաչափերի բարձրացումը, ինչպես նաեւ նոր հարկատեսակի ներդրումը կիրառել առանց հարկատուների իրավունքները հաշվի առնելու, առանց վերջիններիս՝ հարկային նոր ռեժիմին նախապատրաստվելու հնարավորություն ընձեռնելու:

Արդյունքում մեր իրավակիրառ պրակտիկայում լայնորեն տարածում է ստացել այն արատավոր մոտեցումը, երբ հարկային դրույքաչափի բարձրացումը կամ նոր հարկատեսակի ներմուծումը նախատեսող օրենսդրական փոփոխությունը կատարվում է ընթացիկ տարվա վերջում՝ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ընդունման հետ միաժամանակ եւ ուժի մեջ մտնում անմիջապես հաջորդ ֆինանսական տարվա սկզբից՝ հաճախ տիպիկ անակնկալի բերելով տնտեսավարողներին:

Ավելին, հարկերի դրույքաչափերի փոփոխությունների ուժի մեջ մտնելու խնդրի, ըստ էության, կարգավորված չլինելը հանգեցրել է նրան, որ միեւնույն հարկի մասին օրենքում փոփոխություններ կատարելու վերյաբերյալ օրենսդրական առաջարկությունները Կառավարության կողմից կատարվում են այնպիսի հաճախականությամբ, որ ԱԺ օրակարգում միաժամանակ հայտնվում են նույն հարկի մասին օրենքում փոփոխությունների մի քանի, երբեմն իրարամերժ, առաջարկներ եւ շփոթ առաջացնում թե՛ օրենսդիրի եւ թե՛ հարկատուների շրջանում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող օրենքների կարգավորման առարկան՝ հարկերի գործող դրույքաչափերում փոփոխություններ, նոր հարկատեսակի ներդրում նախատեսող օրենքների ուժի մեջ մտնելը կանոնակարգելն է՝ առաջնորդվելով հարկատուների իրավունքներով: Առաջարկվում է առաջնորդվել հարկատուներին հարկային նոր ռեժիմի պայմաններում գործելու հնարավորություն ընձեռնելու տրամաբանությամբ:

3. Նախագծի ընդունման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք եւ նրանց դիրքորոշումը

Օրենքի նախագիծը մշակվել է ԱԺ պատգամավորի նախաձեռնությամբ՝ ԱԺ տնտեսական հարցերի հանձնաժողովում հարկային օրենսդրությանը վերաբերող մի շարք նախագծերի քննարկումների, ինչպես նաեւ գործարար շրջանակների հետ հանդիպումների արդյունքում: